Ծուշանիկ Կուրղինյան

Թող եռա անխափ ծովը զրկանքի . . .

«Կռվի մեջ ձեռք կբերես քո իրավունքը . . . »

Թող եռա անխափ ծովը զրկանքի,
Կատաղած ալին արնոտ ափերից
Կուլ տա՛ տագնապով, առանց փրկանքի
Անհամար զոհեր կռվող շարքերից:

Թող ճնշե՛, ընկճե՛ լուծը բռնության,
Լցված բանտերի ճարճատեն պատեր .
Ճռճա կախաղան, զնգզնգա շղթան,
Արնաքամ մեջքին շաչեն մտրակներ:

Թող քաղցը մաշե՛ փոքրին և մեծին
Եվ ագահ ծծե հյութը սրտերի .
Գարշ ատելության շունչը քմածին
Հյուսե անարգել ցանցը դավերի:

Թող գազանային հակումով դաժան
Եղբայր եղբոր դեմ կանգնեն ստահակ,
Եվ հյուծեն մարդիկ անընկեր, բաժան,
Ամեն սրբություն արած ոտնատակ:

Եվ թող ոլորտա երկրի երեսին

Հղփացած կյանքի մոլար զեխություն .
Չարը խափանի կենսարար լույսին՝
Սև աղջամուղջի տիրե թանձրություն:

Այնժամ . . . լոկ ա՛յնժամ, այդ մեծ կռվի մեջ
Մենք ձեռք կբերենք մեր սուրբ իրավունք՝
Երբ քաջ, միացած, հավատով անշեջ՝
Ոչ ոք չտեսնի վախկոտի թիկունք . . .

1907 թ. 13 մարտի